ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՊՎ-245
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

քաղ. Երևան «26» սեպտեմբեր 2012թ.

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը՝ ի դեմս նախարար ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ, որը գործում է Հայաստանի Հանրապետության անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ՝ լիազոր մարմին) մի կողմից, և «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ տնտեսավարող սուբյեկտը (այսուհետ՝ ընդերքօգտագործող), ի դեմս տնօրեն ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆԻ, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) և այլ իրավական ակտերով, համապատասխանաբար նախարարության և տնտեսավարող սուբյեկտի կանոնադրություններով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթղթերը, տրամադրվող հանքավայրի կամ հանքավայրի տրամադրվող տեղամասի կամ հանքային ջրի աղբյուրի կամ հորատանցքի շահագործման նախագիծը, կնքեցին սույն ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պայմանագիրը նախատեսում է հանքավայրը կամ հանքավայրի տեղամասը կամ հանքային ջրի աղբյուրը կամ հորատանցքը շահագործման տրամադրելու պայմանները և ժամկետները, լեռնահատկացման կոորդինատները, կամ հանքային ջրի աղբյուրի կամ հորատանցքի կոորդինատները և սանիտարական գոտու սահմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, վճարների (բնօգտագործման, բնապահպանական, բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման, մշտադիտարկումների իրականացման) վճարման վերաբերյալ դրույթներ, բնապահպանական կառավարման պլանը, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման (զգուշացման, հրաժարման, փոփոխության), համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ, հանքի փակման հետ կապված դրույթները, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները կարգավորող այլ պայմաններ:

1.2 Պայմանագիրը բաղկացած է հիմնական տեքստից և N 1 հավելվածից, որը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը:

1.3 Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, այդ թվում՝ կողմերի այլ իրավունքները կարգավորվում են օրենսգրքով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

## 2. Պայմանագրի առարկան

2.1 Պայմանագրով՝ լիազոր մարմինն ընդերքօգտագործողին տարեկան 2600,0 հազ.տ օգտակար հանածոյի պաշարների մարման

(օգտակար հանածոյի քանակը, մ$^3$, գ/տ)

համար ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում 2009 թ-ի դեկտեմբերի 28-ից մինչև 2034թ-ի ապրիլի 03-ը ( 1-ին 4 տարին բացահանքի շինարարական և լեռնակապիտալ աշխատանքների տևողությունն է), իսկ ընդերքօգտագործողն ընդունում ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր

քվարցիտների հանքավայրի

(հանքավայրի անվանումը)

<Տիգրանես> և <Արտավազդես> տեղամասերի

(տեղամասի անվանումը կամ հանքային ջրերի աղբյուրի անվանումը կամ հորատանցքի համարը)

հաշվեկշռային պաշարներն օգտագործման ամբողջ ժամկետի համար 56434 հազ.տ

ըստ $C_1$+ $C_2$ կարգերի

(հիմնական և ուղեկից օգտակար հանածոների քանակները՝ ըստ կարգերի)

որոնք հատակագծի վրա և ըստ խորության սահմանափակվում են հետևյալ կոորդինատներով՝

1.X=4400442 Y=8561482 H=2850,0 (-150,0)
2.X=4400462 Y=8561721 H=2817,0 (-117,0)
3.X=4400415 Y=8561845 H=2810,0 (-110,0)
4.X=4400103 Y=8561912 H=2814,0 (-114.0)
5. X=4399789 Y=8561766 H=2886,0 (-186.0)
6. X=4399346 Y=8562042 H=2919,0 (-219.0)
7. X=4398990 Y=8561890 H=2956,0 (-256.0)
8. X=4398990 Y=8561801 H=2916,0 (-216.0)
9. X=4399136 Y=8561776 H=2927,0 (-227.0)
10. X=4399416 Y=8561439 H=2936,0 (-236.0)
11. X=4399309 Y=8561309 H=2882,0 (-182.0)
12. X=4399662 Y=8561036 H=2788,0 (-88.0)

(տրամադրվող պաշարների սահմանների ծայրակետային կոորդինատները)

Ոսկու միջին պարունակությունը ըստ $C_1$+ $C_2$ կարգերի՝ 0.93 գ/տ, $C_1$ կարգի՝ 1.0գ/տ, $C_2$ կարգի՝ 0.87 գ/տ, արծաթի միջին պարունակությունը ըստ $C_1$+ $C_2$ կարգերի՝ 3,73 գ/տ, $C_1$ կարգի՝ 3.87գ/տ, $C_2$ կարգի՝ 3.60 գ/տ

(հիմնական և ուղեկից բաղադրիչների պարունակությունը %, գ/տ և այլն)

Ոսկի 52664կգ. Արծաթ -210.51տ

(օգտակար հանածոյի պաշարների տեսակները (տարատեսակները))

Լեռնահատկացման սահմանները հատակագծի վրա և ըստ խորության (հավելված) համաձայն լեռնահատկացման ակտի թիվ ԼՎ-245

(ակտի համարը)

Պայմանագրի N 1 հավելվածով նշվում են ընդերքօգտագործողի ֆինանսական առաջարկները և նրա կողմից վճարվող ընդերքօգտագործման վճարները:

Պայմանագիրն ըստ անհրաժեշտության կարող է ունենալ նաև այլ հավելվածներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման և հումքի վերամշակման աշխատանքների ժամկետները, ըստ փուլերի, իսկ զուգահեռաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու դեպքում դրանց կատարման ժամանակացույցի:

2.2 Լիազոր մարմինը երաշխավորում է, որ պայմանագրի 2.1-ին կետում նշված հանքավայրը կամ հանքավայրի տեղամասը գրավ դրված, վարձակալության, անհատույց օգտագործման տրված չէ, կառուցապատված կամ կառուցապատման իրավունքով ծանրաբեռնված չէ, ինչպես նաև արգելանքի տակ չի գտնվում:

2.3 Պայմանագրի գործողության ընթացքում հանքավայրի օգտագործման արդյունքում ընդերքօգտագործողի ստացած շահույթը նրա սեփականությունն է:

### 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1 Լիազոր մարմինը իրավունք ունի`**

3.1.1 ընդերքօգտագործողից պահանջելու հանքավայրը շահագործել ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում ընդունված ստանդարտներին, նորմերին ու կանոններին համապատասխան.

3.1.2 գրավոր զգուշացնելու և վաղաժամկետ լուծելու պայմանագիրն օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն.

3.1.3 ստուգելու ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքությունը, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարումը.

3.1.4 ստուգելու ընդերքօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների, վճարների հաշվարկման և հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման կարգի պահանջների կատարումը.

3.1.5 ստուգելու ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված պարտավորությունների և նախագծի պահանջների կատարումը` բացառությամբ բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունների.

3.1.6 պահանջելու ընդերքօգտագործողից օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզում և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ողջամիտ և համալիր օգտագործում կամ դրանց պահեստավորումն ու պահպանումը.

3.1.7 պահանջելու ընդերքօգտագործողից ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում հանձնել լիազոր մարմնին.

3.1.8 իրականացնելու ընդերքի տրամադրված տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ, բացառությամբ օգտակար հանածոների հայտնաբերման նպատակով, այդ մասին առնվազն 14 օր առաջ գրավոր իրազեկելով ընդերքօգտագործման իրավունք կրողին.

3.1.9 ստուգվող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործելու ստուգվող սուբյեկտի գրասենյակային,

արտադրական, պահեստային, լաբորատոր և այլ տարածքներ ու ստորաբաժանումներ.

3.1.10 ստուգման ընթացքում ստուգվող սուբյեկտից պահանջելու փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, ինչպես նաև վերցնելու փորձանմուշներ, կատարելու կապարակնքում և չափագրումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին.

3.1.11 ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողություն իրականացնելու տեսչական ստուգումների, ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով` «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի դրույթներին համապատասխան:

### 3.2 Լիազոր մարմինը պարտավոր է`

3.2.1 ընդերքօգտագործողին սահմանված կարգով տրամադրել հանքավայրին վերաբերվող փաստաթղթերը.

3.2.2 գրավոր իրազեկել ընդերքօգտագործողին առնվազն 14 օր առաջ ընդերքի տրամադրված տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ կետով տրված համաձայնության մասին:

### 3.3 Ընդերքօգտագործողն իրավունք ունի`

3.3.1 բացառիկ իրավունքով կատարելու երկրաբանական ուսումնասիրություն լեռնահատկացման սահմաններում, իսկ հատկացված ընդերքի տեղամասում` օգտակար հանածոյի արդյունահանում.

3.3.2 մտնելու ընդերքի տեղամաս և իրականացնելու նախագծով նախատեսված բոլոր աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման և ուսումնասիրության նպատակով.

3.3.3 օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կառուցելու անհրաժեշտ շենքեր, շինություններ, հաղորդակցության ուղիներ, տեղադրելու սարքավորումներ, փոխադրելու և հարստացնելու արդյունահանված օգտակար հանածոն.

3.3.4 տնօրինելու արդյունահանված օգտակար հանածոն.

3.3.5 օրենսգրքի պահանջների պահպանմամբ հանքարդյունահանման իրավունքի ընթացքում օգտագործելու սեփական գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը.

3.3.6 իրեն տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի շրջանակում երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքմամբ ներգրավելու երրորդ անձանց.

3.3.7 դիմելու լիազոր մարմին օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի պայմանները փոփոխելու նպատակով, եթե հայտնվել են էապես նոր` նախկինում չնախատեսված հանգամանքներ.

3.3.8 վաղաժամկետ հրաժարվելու օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից՝ կատարելով պայմանագրով և օրենսգրքով նախատեսված պարտավորությունները:

### 3.4 Ընդերքօգտագործողը պարտավոր է՝

3.4.1 իրականացնել աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան.

3.4.2 կատարել լիազոր մարմնի և այլ իրավասու պետական մարմինների՝ օրենսդրության պահանջների պահպանման նպատակով տրված ցուցումները.

3.4.3 պահպանել օգտակար հանածոյի արդյունահանման, տեղափոխման և վերամշակման ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունված ստանդարտների, նորմերի ու կանոնների պահանջները.

3.4.4 ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը.

3.4.5 վարել երկրաբանական, մարկշեյդերական և այլ փաստագրություն, պահպանել դրանք ընդերքօգտագործման բոլոր ձևերի աշխատանքների ընթացքում.

3.4.6 վարել օգտակար հանածոների պաշարների ամենօրյա շարժի գրանցամատյանը.

3.4.7 ներկայացնել լիազոր մարմին օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները.

3.4.8 հանձնել լիազոր մարմնին անհրաժեշտ երկրաբանական տեղեկությունը.

3.4.9 հավաքել, պահպանել և լիազոր մարմնին տրամադրել ուսումնասիրված, արդյունահանված և ընդերքում կորսված օգտակար հանածոների պաշարների, դրանց պարունակած բաղադրամասերի, որակի ու քանակի մասին տվյալներ.

3.4.10 ապահովել ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների կատարման անվտանգությունը.

3.4.11 ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի ու բնության և շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

3.4.12 ապահովել բնության, պատմական և մշակույթի հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

3.4.13 ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությամբ նախատեսված պայմանները.

3.4.14 նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը

(ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի.

3.4.15 տեղեկացնել լիազոր մարմնին օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին դրանց հայտնաբերումից հետո` 14 օրվա ընթացքում.

3.4.16 նոր հայտնաբերված օգտակար հանածոների արդյունահանում չիրականացնելու դեպքում իրականացնել դրա պահուստավորումը կառավարության սահմանած կարգով.

3.4.17 ապահովել հանքի փակման ծրագրի, այդ թվում` հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը.

3.4.18 ապահովել փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը.

3.4.19 ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը.

3.4.20 ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ շահագործվող հանքավայրում (տեղամասում) կոնդիցիաները և պաշարները ենթարկել վերագնահատման և ներկայացնել լիազոր մարմնի վերահաստատմանը.

3.4.21 ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում իր տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում սահմանված կարգով հանձնել լիազոր մարմնին.

3.4.22 տեղեկացնել ընդերքօգտագործման իրավունքի իրավահաջորդության մասին լիազոր մարմնին վերակազմակերպման գրանցման պահից 14 օրվա ընթացքում.

3.4.23 սկսել աշխատանքները սահմանված կարգով հողհատկացման իրավունքի տրամադրումից հետո.

3.4.24 թույլատրել լիազոր մարմնին ստուգման նպատակով անարգել մուտք գործելու գրասենյակային, արտադրական, պահեստային, լաբորատոր և այլ տարածքներ ու ստորաբաժանումներ.

3.4.25 տրամադրել լիազոր մարմնին ստուգման ընթացքում պահանջվող փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, ինչպես նաև թույլատրել վերցնելու փորձանմուշներ, կատարել կապարակնքում և չափագրումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին.

3.4.26 կատարել Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված բոլոր պարտականությունները.

## 4. Զգուշացում

4.1 Լիազոր մարմինը, օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն, կարող է ընդերքօգտագործողին տալ զգուշացում, եթե նա`

4.1.1 չի կատարում օրենսգրքով նախատեսված պարտավորությունները.

4.1.2 չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ պայմանագրով, նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները՝ բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի.

4.1.3 չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում:

4.2 Լիազոր մարմինն իրավունք չունի որոշում ընդունելու ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե իրավունք կրողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հե-տո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում վերացրել է նշված հիմքերը:

## 5. Հաշվետվություններ և տեղեկություն

5.1 Ընդերքօգտագործման իրավունք կրողը լիազոր մարմին օրենսգրքով, այլ օրենքներով սահմանված կարգերով պարտավոր է ներկայացնել հետևյալ հաշվետվությունները և տեղեկությունները՝

5.1.1 ընդերքօգտագործման բնագավառում բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություն.

5.1.2 օգտակար հանածոների պաշարների տարեկան հաշվետվություն (5-ՕՀՊՀ).

5.1.3 ________________________________________

5.2 Հաշվետվությունների ձևերի փոփոխման դեպքում լիազոր մարմինը պարտավոր է այդ մասին տեղեկացնել ընդերքօգտագործողին՝ փոփոխությունների կատարման պահից մեկամսյա ժամկետում:

5.3 Ընդերքօգտագործողը սահմանված վճարների վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում, կարգով և ձևով:

## 6. Պայմանագրի ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և լուծումը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է թույլտվության գործողության ամբողջ ժամանակահատվածում, եթե պայմանագրով սահմանված հիմքերով պայմանագիրը վաղաժամկետ չի լուծվել:

6.2 Պայմանագիրը գործում է նաև ժամկետի կամ թույլտվությամբ տրամադրված ընդերքի տեղամասի սահմանված կարգով փոփոխության դեպքում: Եթե երկարաձգվել է թույլտվության պայմանների փոփոխությամբ, ապա պայմանագիրը շարունակում է գործել՝ հաշվի առնելով այդ փոփոխությունները:

6.3 Պայմանագիրը կարող է լուծվել՝

6.3.1 լիազոր մարմնի նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից պայմանագրի դրույթների խախտման դեպքում.

6.3.2 ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ հանդիսացող ընդերքի ամբողջ տեղամասից հրաժարվելու դեպքում դիմում ներկայացնելու և լիազոր մարմնի կողմից հրաժարման հավաստագիր տրամադրելու դեպքում.

6.3.3 թույլտվության ժամկետի ավարտի դեպքում:

6.4 Լիազոր մարմնի կողմից թույլտվությունն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցվելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:

## 7. Պայմանագրում փոփոխություն կատարելու հիմքերը

Լրահետախուզման և (կամ) շահագործական հետախուզման արդյունքում հանքավայրում պաշարների էական փոփոխության, հանքավայրի լեռնաերկրաբանական, տեխնիկատնտեսական պայմանների զգալի փոփոխման դեպքում ընդերքօգտագործողի առաջարկությամբ լիազոր մարմինը կարող է ընդերքօգտագործման իրավունքը ձևավորող փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ: Հանքավայրի շահագործման փոփոխված պայմանները ներկայացվում են առանձին (հավելված ---):

## 8. Անհաղթահարելի ուժի, ինչպես նաև կողմերի գործունեության հետ չկապված դեպքեր

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են` հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլ դեպքեր, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

## 9. Վեճերի լուծումը

Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

## 10. Ծանուցում

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծանուցումները, հաղորդումների կատարումը համարվում է պատշաճ, եթե կատարված է գրավոր և տրված է առձեռն, կամ ուղարկված է պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ կատարված է փոխանցում ֆաքսի միջոցով կողմի ստորև նշված հասցեով կամ այդ նպատակով կողմի նշած մեկ այլ հասցեով, ընդ որում յուրաքանչյուր դեպքում պետք է առկա լինի գրավոր ստացական, որը կարող է փոխանցվել էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով:

## 11. Այլ դրույթներ

11.1 Սույն պայմանագրի հավելվածները կազմում են նրա անբաժանելի մասը.

11.2 Սույն պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ.

11.3 Պայմանագրին կցվում է հավելված՝ N 1 ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները 3 էջից:

## 12. Կողմերի գտնվելու վայրը, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Լիազոր մարմին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 2

(փոստային դասիչը, գտնվելու վայրը)

հեռ.521-964, ֆաքս՝ (37410) 526-365; Ֆին. նախ. գործառն. վարչ. հ/հ900011009082

(հեռախոսահամարները, հեռագրային դասիչները, հաշվարկային հաշիվ)

Ընդերքօգտագործող՝ «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ, ք. Երևան, Այգեձոր 1նրբ. 22 շ. 37 բն.:

(փոստային դասիչը, գտնվելու վայրը,)

հեռ. 58-55-55; «Էյչ-Էս-Բի-Սի բանկ», հ/հ 001252600001, հվհհ 00091919

(հեռախոսահամարները, հեռագրային դասիչները, հաշվարկային հաշիվ, հարկային կոդը)

| ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝ | ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝ «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ (կազմակերպության անվանումը) |
|---|---|
| ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ (անունը, ազգանունը) | ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ (անունը, ազգանունը) |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| «26» սեպտեմբերի 2012թ. | «26» սեպտեմբերի 2012թ. |
| Կ.Տ. | Կ.Տ. |



11.2

Հավելված N 1
օգտակար հանածոյի արդյունահանման
«26» 09 2012թ. N ՊՎ-245
ընդերքօգտագործման պայմանագրի

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

## 1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները

| հհ | Աշխատանքների անվանումը | Նախատեսվող ներդրումներ, հազ. դրամ | Ժամկետ |
|---|---|---|---|
| 1 | Երկրաբանահետախուզական աշխատանքներ<br>ա) շահագործական, հետախուզման և լրահետախուզման աշխատանքներ | 2.460.000 | 2013-2014 |
| | բ) երկրաբանական ամփոփ հաշվետվությունների և տեխնիկա-տնտեսական հիմնավորումների կազմում, հաստատում | 200.000 | 2012-2014 |
| 2 | Ընդերքօգտագործման փաստաթղթերի փաթեթի ձևավորում՝<br>ա)հանքարդյունահանման լիցենզիայի (հատուկ լիցենզիայի) տարեկան պետական տուրքի գումարը | 30.000 | 2012-2016 |
| | բ) ընդերքօգտագործման նախագծի մշակում, փորձաքննության անցկացում | | |
| 3 | Հանքավայրի նախապատրաստումը շահագործման ա) ճանապարհների և հաղորդակցուղիների կառուցում | 270.000 | 2012-2014 |
| | բ) մակաբացման աշխատանքներ | 250.000 | 2012-2015 |
| | գ) արտադրական և աշխատանքային հրապարակի կառուցում | 250.000 | 2013-2015 |
| | դ) շենքերի, շինությունների և օժանդակ կառույցների ստեղծում | 60.000.000 | 2013-2015 |
| | ե) անհրաժեշտ լեռնահանքային սարքավորումների և տրանսպորտային միջոցների ձեռքբերում | 2.500.000 | 2013-2015 |
| | զ) էլեկտրամատակարարման ապահովում | 650.000 | 2013-2014 |
| | է) լցակույտերի և հանքաքարի պահեստների տեղադրման նախապատրաստում | 8.500.000 | 2013-2016 |
| | ը) բուսահողի կուտակում, ռեկուլտիվացիա | 50.000 | 2015 |
| | Ընդամենը | 75.180.000 | |

## 2. Պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարներ

2.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են պարտադիր վճարներ (բնապահպա-նական, բնօգտագործման կամ ռոյալթի)՝ «Բնապահպանական և բնօգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով.

2.2 ընդերքօգտագործման թույլտվության դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում է տարեկան պետական տուրք՝ համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

## 3. Բնության և շրջակա միջավայրի դրամագլխիէ և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ

3.1 օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով.

| | |
|---|---|
| ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝ | ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝ |
| | «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ<br>(կազմակերպության անվանումը) |
| ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ<br>(անունը, ազգանունը) | ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ<br>(անունը, ազգանունը) |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| «26» նոյեմբերի 2012թ. | «26» նոյեմբերի 2012թ. |
| Կ.Տ. | Կ.Տ. |



- 11 -

**<Գեոթիմ> ՓԲ ընկերությանը շահագործման տրամադրված Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի արդյունահանման ՇԱԹՎ-29/245 թույլտվության գործողության ժամկետը տողում <2034 թ-ի ապրիլի 3-ը> բառերը փոխարինվել է՝ <2040 թվականի ապրիլի 3-ը> բառերով:**

***Հիմք՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 156-Ա հրամանը:***

***ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների***

***նախարարության աշխատակազմի***

***ընդերքի տրամադրման գործակալության պետ՝*** ***Կ. Հակոբյան***

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԻՎ ՊՎ-245 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Հիմք ընդունելով՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 20.03.2014թ. N42 -Ա հրամանը և «ԳԵՈԹԻՄ» ՓԲ ընկերության 2014 թվականի մարտի 14-ի թիվ Հ/Ա-2014/09 գրությունը, ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը՝ ի դեմս նախարար ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ, մի կողմից, և «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆԻ, մյուս կողմից, կատարում են հետևյալ փոփոխությունները 2012 թվականի սեպտեմբերի 26-ին կնքած օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագրում.

1. Պայմանագրի 2.1 կետի առաջին պարբերության մեջ՝

- «2034թ-ի ապրիլի 03-ը» բառերը փոխարինել «2040 թ-ի ապրիլի 03-ը» բառերով, «1-ին 4 տարին բացահանքի շինարարական և լեռնակապիտալ աշխատանքների տևողությունն է» բառերը փոխարինել՝ «բացահանքի շինարարական և լեռնակապիտալ աշխատանքների ավարտման ժամկետ սահմանել մինչև՝ 2018 թվականի սեպտեմբերի 26-ը» բառերով:

2. Պայմանագրի սույն փոփոխությունն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրելու պահից, իսկ Պայմանագիրը շարունակում է գործել՝ հաշվի առնելով այս փոփոխությունները:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
(անուն, ազգանուն)

______________
(ստորագրություն)

«21» 03 2014թ.

Կ.Տ.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝

«ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ
(կազմակերպության անվանումը)

ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ
(անուն, ազգանուն)

______________
(ստորագրություն)

«21» 03 2014թ.

Կ.Տ.

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
# ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊՎ-245 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «12» 11 2014թ.

Հիմք ընդունելով՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 11 11 2014թ. N188-Ա հրամանը, <<ԳԵՈԹԻՄ>> ՓԲ ընկերության՝ 2012 թվականի սեպտեմբերի 26-ի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագրի՝ <<2.Պայմանագրի առարկան>> բաժնում՝ <<1.X=4400442 Y=8561482 H=2850,0 (-150,0), 2.X=4400462 Y=8561721 H=2817,0 (-117,0), 3.X=4400415 Y=8561845 H=2810,0 (-110,0), 4.X=4400103 Y=8561912 H=2814,0 (-114.0), 5. X=4399789 Y=8561766 H=2886,0 (-186.0), 6. X=4399346 Y=8562042 H=2919,0 (-219.0), 7.X=4398990 Y=8561890 H=2956,0 (-256.0), 8. X=4398990 Y=8561801 H=2916,0 (-216.0), 9. X=4399136 Y=8561776 H=2927,0 (-227.0), 10. X=4399416 Y=8561439 H=2936,0(-236.0),11. X=4399309 Y=8561309 H=2882,0 (-182.0), 12. X=4399662 Y=8561036 H=2788,0 (-88.0)>>, կոորդինատները փոխարինել՝ <<1.X=4400434 Y=8561382 H=2850,0 (-150,0), 2.X=4400454 Y=8561621 H=2817,0 (-117,0), 3.X=4400407 Y=8561745 H=2810,0 (-110,0), 4.X=4400095 Y=8561812 H=2814,0 (-114.0), 5. X=4399781 Y=8561666 H=2886,0 (-186.0), 6. X=4399338 Y=8561942 H=2919,0 (-219.0), 7. X=4398982 Y=8561790 H=2956,0 (-256.0),8. X=4398982 Y=8561701 H=2916,0 (-216.0), 9. X=4399128 Y=8561676 H=2927,0 (-227.0), 10. X=4399408 Y=8561339 H=2936,0 (-236.0), 11. X=4399301 Y=8561209 H=2882,0 (-182.0), 12. X=4399654 Y=8560936 H=2788,0 (-88.0) ARM WGS-84 կոորդինատներով>>:

Սույն փոփոխությունը համարվում է՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-245 պայմանագրի անբաժանելի մասը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«12» 11 2014թ.

Կ.Տ.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝

« ԳԵՈԹԻՄ » ՓԲԸ
(կազմակերպության անվանումը)

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«12» 11 2014թ.

Կ.Տ.

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
# ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊՎ-245 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «26» 11 2014թ.

Հիմք ընդունելով՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2014թ-ի նոյեմբերի 24-ի թիվ 286-Ա հրամանը, <ԳԵՈԹԻՄ> ՓԲ ընկերության հետ՝ 2012 թվականի սեպտեմբերի 26-ի ՊՎ-245 պայմանագրի՝ <2.Պայմանագրի առարկան> բաժնի 2.1 կետում.

1. <2600 հազար տ՛> բառերը փոխարինել <10մլն տ> բառերով, <2009թ-ի ապրիլի 3-ից մինչև 2040թ-ի ապրիլի 3-ը> բառերը փոխարինել՝ <2009թ-ի ապրիլի 3-ից մինչև 2034 թ-ի հունվարի 1-ը, այդ թվում՝ 2 տարի շինարարական շրջան, 9 տարի օգտակար հանածոների արդյունահանում, 7 հանքի փակում> բառերով. < ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի (Տիգրանես և Արտավազդես տեղամասեր) 56434.5 հազար տ (Au-52664կգ /0.93գ/տ/, Ag-210.51 գ/տ /3.73գ/տ/ միջին պարունակությամբ)> բառերը լրացնել Էրատո տեղամասով՝ <32941,8 հազար տ (Au-21069կգ /0.64գ/տ/, Ag-83.86տ /2.55գ/տ/ քանակներով և միջին պարունակությամբ)> բառերով, տրամադրելով ընդհանուրը՝ 89376,3 հազար տ մարվող պաշար (Au-73733 կգ /0,825 գ/տ/, Ag-294.367 տ /3,29 գ/տ քանակներով և միջին պարունակությամբ) բառերով:

2. <որոնք հատակագծի վրա և ըստ խորության սահմանափակվում են հետևյալ կոորդինատներով> տողում՝ <<1.X=4400434 Y=8561382 H=2850,0 (-150,0), 2.X=4400454 Y=8561621 H=2817,0 (-117,0), 3.X=4400407 Y=8561745 H=2810,0 (-110,0), 4.X=4400095 Y=8561812 H=2814,0 (-114.0), 5. X=4399781 Y=8561666 H=2886,0 (-186.0), 6.X=4399338 Y=8561942 H=2919,0 (-219.0), 7. X=4398982 Y=8561790 H=2956,0 (-256.0),8. X=4398982 Y=8561701 H=2916,0 (-216.0), 9. X=4399128 Y=8561676 H=2927,0 (-227.0), 10. X=4399408 Y=8561339 H=2936,0 (-236.0), 11. X=4399301 Y=8561209 H=2882,0 (-182.0), 12. X=4399654 Y=8560936 H=2788,0 (-88.0) <<ARM WGS-84>> կոորդինատներով բնութագրվող տեղամասն ընդլայնել՝ <1,X=4400872 Y=8560356 H=2807 h-147, 2,X=4400929 Y=8560407 H=2824 h-164, 3,X=4401002 Y=8560413 H-2827 h-167, 4,X=4401073 Y=8560413 H=2848 h-188, 5,X=4401422 Y=8560411 H=2785 h-125, 6,X=4401585 Y=8560508 H=2816 h-156, 7,X=4401646 Y=8560733 H=2860 h-200, 8,X=4401465 Y=8560930 H=2846 h-186, 9,X=4401170 Y=8561010 H=2838 h-178, 10,X=4401047 Y=8560750 H=2896 h-236, 11,X=4400889 Y=8560632 H=2824 Y-164, 12,X=4400839 Y=8560471 H=2800 h-140, 13,X=4400832 Y=8560379 H=2796 h-136 <ARM WGS 84> կոորդինատային համակարգի կոորդինատներով բնութագրվող Էրատո տեղամասով>>.

Սույն փոփոխությունը համարվում է՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-245 պայմանագրի անբաժանելի մասը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«26» 11 2014թ.

Կ.Տ.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝

«ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ
(կազմակերպության անվանումը)

ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«26» 11 2014թ.

Կ.Տ.

*Հավելված N 1*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*26.11 թ. NՊՎ-245*
*ընդերքօգտագործման պայմանագրի*

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

## 1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները

| NN | Ծախսերի անվանումը | Կատարման, ներդրումների ժամկետը | Չափը - մլն ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Հանքի աշխատանքներ, այդ թվում՝ <br>• Ճանապարհների կառուցում և մակաբացման աշխատանքներ <br>• Կույտային տարրալվացման հարթակի և դատարկ ապարների հարթակի կառուցում | 2015-2017թթ. | 11,768.01 |
| 2 | Կապիտալ, այդ թվում՝ <br>• Կույտային տարալվացման հարթակի և ոսկու կորզման ֆաբրիկայի կառուցում <br>• Սարքավորումներ և մեխանիզմներ <br>• Շենքեր, շինություններ | 2015-2017թթ. | 96,211.8 |
| 3 | Գործառնական ծախսեր հանքի կառուցման ընթացքում | 2015-2017թթ. | 517.0 |
| | Ընդամենը կապիտալ ներդրումներ | | 108,496.81 |

Վերոնշյալ գումարները ներառում են գնային տատանումների և չնախատեսված ծախսումների համար հավելում 10%, հետևաբար իրական ծախսումները կարող են այդքանով պակաս լինել:

Վերոնշյալ գումարները հաշվարկելիս ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ ընդունվել է 410 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց:

2. Պետական տուրքի եւ ընդերքօգտագործման վճարներ

2.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են պարտադիր վճարներ (բնապահպանական, բնօգտագործման կամ ռոյալթի)՝ "Բնապահպանական եւ բնօգտագործման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով եւ չափով.

2.2 ընդերքօգտագործման թույլտվության դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում է տարեկան

պետական տուրք՝ համաձայն "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով եւ չափով:

3. Բնության եւ շրջակա միջավայրի դրամագլուխ եւ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության եւ առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ

3.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից բնության եւ շրջակա միջավայրի դրամագլխի վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով եւ վճարման կարգով.

3.2 օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության եւ առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով եւ վճարման կարգով.

3.3 բնապահպանական աշխատանքների իրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած հատկացումների չափը.

3.4 օգտակար հանածոների արդյունահանման նախագծով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից բնության եւ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին:

| | |
|---|---|
| ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝ | ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝ |
| | «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ |
| | (կազմակերպության անվանումը) |
| ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ | ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ |
| (անունը, ազգանունը) | (անունը, ազգանունը) |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| «26» 11 2014թ. | «26» 11 2014թ. |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 2*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*26.11-----------թ. ՆՊՎ-245*
*ընդերքօգտագործման պայմանագրի*

## Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ

1. Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ՝

1.1 ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հանքի փակման ծրագրով նախատեսված՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումները (վերաորակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ եւ հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար եւ այլն).

1.2 փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումները (համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր եւ միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն եւ այլն).

1.3 հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը եւ այն ներկայացնել լիազոր մարմին:

Միջոցառումների ցանկ ուղված հանքի փակումից հետո հնարավոր սոցիալ-տնտեսական խնդիրների մեղմացմանը

| NN | Միջոցառումների անվանումը | Կատարման ժամկետը | Ներդրումների չափը, մլն. ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Վերաորակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ եւ հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար եւ այլն<br>• Հանքի շահագործման ժամկետի ընթացքում շրջակա համայնքների մարդկային | Տարեկան | 61.0 |

| | | | |
|---|---|---|---|
| | ռեսուրսների հմտությունների զարգացում | | |
| 2 | Համայնքների սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր եւ միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն եւ այլն<br>• Գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկատիրության խրախուսումը/աջակցումը<br>• Բույսերի/ծառերի տնկարանի (ների) զարգացումը<br>• Գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորման և վերամշակման օբյեկտների հիմնումը<br>• Տարածքում կաթի մշակման ձեռնարկությունների կոոպերատիվների հիմնումը և հովիվներին աջակցություն կաթի արտադրության ծավալների մեծացման հարցում<br>• Սարավան և Գնդեվազ համայնքներում կոոպերատիվների ստեղծման աջակցության, մրգերի չորանոցների և իրացման աջակցություն | | |

Շրջակա միջավայրի պահպանության և արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության աշխատանքների ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման հաշվարկ:

| Հ/հ | Հիմնա-վորում | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափման միավորը | Ծավալը | Արժեքը մլն. դրամ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Միավորի | Ընդհանուր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | | Հանքատար և լցակույտատար ճանապարհների ռեկուլտիվացիա | կմ | 18.26 | 9.684 | 176.837 |
| 2 | | Արտաքին լցակույտի ռեկուլտիվացիա | հա | 140.69 | 4.842 | 681.249 |
| 3 | | Տարրալվացման հարթակ և ավազանների ռեկուլտիվացիա | հա | 135.75 | 4.842 | 657.329 |
| 4 | | ԱԴՎ կայան և վարչական շենքերի րարamnնտաժում և ռեկուլտիվացիա | հա | 19.35 | 4.842 | 93.697 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | | Փոխակրիչների հանգույցի ապամոնտաժում և ռեկուլտիվացիա | հա | 16.87 | 4.842 | 81.688 |
| 6 | | Ավտոինքնաթափերի բեռնաթափման հանգույցի ռեկուլտիվացիա | հա | 5.11 | 4.842 | 24.744 |
| 7 | | Ջարդիչ կայանների ապամոնտաշոժում և ռեկուլտիվացիա | հա | 18.93 | 4.842 | 91.663 |
| 8 | | Ջրահեռացման առուների ռեկուլտիվացիա | կմ | 4.7 | 9.684 | 45.517 |
| 9 | | Պայթուցիկ նյութերի պահեստի ապամոնտաժում և ռեկուլտիվացիա | հա | 1 | 4.842 | 4.842 |
| 10 | | Ջրամատակարարման կայանի ապամոնտաժում և ռեկուլտիվացիա | հա | 0.52 | 4.842 | 2.518 |
| 11 | | Արդյունաբերական հրապարակի ռեկուլտիվացիա | հա | 1 | 4.842 | 4.842 |
| | | | | | | 1,864.926 |

Ընդամենը

Նախնական վճար 279. 738

Տարեկան 158.519

Շրջակա միջավայրի պահպանության դրամգլխին և արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար տարեկան վճարումների չափերը

| NN | Մշտադիտարկում | Արժեքը մլն. ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | Ռեկուլտիվացման աշխատանքների մոնիտորինգ և պահպանում | 150.0 |
| 2 | Մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիտորինգ | 82.0 |
| 3 | Կանաչապատման/ռեվեգետացման մոնիտորինգ | 22.0 |
| | Ընդամենը | 254.0 |

Նախնական վճար 38.1

Տարեկան 23.98

| Վճարման ժամկետները | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նախնական վճար (15%) | | Դրամագլխին վճարվող տարեկան վճարները – հանքի փակում | | | | | | | | | |
| ժամկետ | 2014 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| մլն. ՀՀ դրամ | 279.738 | 158.519 | 158.519 | 158.519 | 158.519 | 158.519 | 158.519 | 158.519 | 158.519 | 158.519 | 158.519 |
| 1 ամսվա ընթացքում պայմանագիրը կնքելու պահից | | 30-Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ |

| Նախնական վճարներ – մշտադիտարկումների համար (15%) | | Մշտադիտարկումների վճարվող տարեկան վճարները | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ժամկետ | 2014 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| մլն. ՀՀ դրամ | 38.1 | 23.98 | 23.98 | 23.98 | 23.98 | 23.98 | 23.98 | 23.98 | 23.98 | 23.98 |
| 1 ամսվա ընթացքում պայմանագիրը կնքելու պահից | | 30- Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ |

Վերոնշյալ գումարները հաշվարկելիս ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ ընդունվել է 410 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց:

| ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝ | ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝ |
|---|---|
| | «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ |
| | (կազմակերպության անվանումը) |
| ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ | ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ |
| (անունը, ազգանունը) | (անունը, ազգանունը) |
| | (ստորագրությունը) |
| «26» 11 2014թ. | «20» 11 2014թ. |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 3*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*26 11 ____թ. NՊՎ-245*
*ընդերքօգտագործման պայմանագրի*

## Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ

1. Շրջակա համայնքներիի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափը եւ կատարման ժամկետները

| NN | Պարտավորությունների անվանումը | Կատարման ժամկետը | Ներդրումների չափը, մլն. ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքային ենթակառույցների զարգացում՝ բարելավելու գյուղական ենթակառույցները, բավարարելու բնակչության սոցիալական կարիքները, ինչպես օրինակ.<br>• Դպրոցներ<br>• Մանկապարտեզ<br>• Ճանապարհներ<br>• Բուժկետեր –պայմանների բարելավում, անձնակազմի վերապատրաստում<br>• և այլն | | 19.0 |
| 2 | Գյուղատնտեսության զարգացում՝ ուղղված համայնքների տնտեսական զարգացմանը, ինչպես օրինակ.<br>• Անասնապահություն – նպաստելու անասունների գենետիկայի բարելավմանը և կաթնարտադրության բարձրացմանը<br>• Այգեգործություն – հիմնելու շահույթ ստեղծող և տնտեսական աճին նպաստող մոդելներ՝ լավագույն պրակտիկաների և եղած բնական և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով: | Տարեկան | 25.0 |
| 3 | • Կրթություն երեխաների, պատանիների և բնակչության այլ խավերի շրջանում. օրինակ՝<br>-սպորտի, արվեստի զարգացում<br>- իրազեկություն շրջակա միջավայրի վերաբերյալ և այլն | | 17.5 |
| 4 | • Առողջապահություն – բարելավելու | | |

| | | | |
|---|---|---|---|
| | համայնքներում առողջապահական ծառայությունները (բնակչության իրազեկություն բարձրացում, առողջ ապրելակերպ, հիմնական սարքավորումներ) | | |
| | Ընդամենը | | 61.5 |

Վերոնշյալ գումարները հաշվարկելիս ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ ընդունվել է 410 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«26» 11 2014թ.

Կ.Տ.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝

«ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ

(կազմակերպության անվանումը)

ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«26» 11 2014թ.

Կ.Տ.

*Հավելված N 4*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*26 11 -------թ. ՆՊՎ-245*
*ընդերքօգտագործման պայմանագրի*

Բնապահպանական կառավարման պլան

Ընդերքօգտագործման հետեւանքով բնապահպանական կորուստների նվազեցման, վնասակար ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ:

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) հանդիսանում է նախատեսվող գործունեության կազմակերպման և իրականացման կարևոր գործիք, այն նախանշում է անհրաժեշտ դիտարկումների, վերահսկման մեխանիզմներ, մեղմացնող միջոցառումներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ծրագրի իրականացման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու, մեղմացնելու կամ վերացնելու համար: Պլանում նշվում են հնարավոր ազդեցությունները, դրանց առավել հավանական վայրերը, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, վերջիններիս իրականացման պատասխանատուները և մոնիթորինգի ծրագիրը:

ԲԿՊ նկարագրում է, թե ինչպես են իրականացվելու և վերահսկվելու մեղմացնող և այլ միջոցառումները: Այն ներառում է տեղեկատվություն, թե ով է պատասխանատու առաջարկվող միջոցառումների իրականացման համար, երբ, որտեղ և ում կողմից են դրանք իրականացվելու և վերահսկվելու: ԲԿՊ-ներառում է հետևյալը.

(i) Նախատեսվող գործունեության տեղամասերը և հատվածները,

(ii) Պոտենցիալ բնապահպանական ազդեցությունները (ներառյալ սոցիալական, մշակութային և հնագիտական ռեսուրսների վրա ազդեցությունը),

(iii) Մեղմացնող միջոցառումներ նախապատրաստական, լեռնակապիտալ շինարարության, շահագործման փուլերում և գործունեության ավարտի համար:

(iv) Մոնիթորինգի գործողություններ բոլոր նշված փուլերի համար

(v) Տարբեր իրավասու կողմերի պարտավորությունները մեղմացնող միջոցառումների և մոնիթորինգի իրականացման ընթացքում:

ԲԿՊ կատարման գրավականն է մոնիթորինգի լիարժեք և ճշգրիտ իրականացումը:

*Մոնիտորինգը ինքնահսկման գործիք է, այն* հանդիսանում է չափագրման և (կամ) հաշվարկային մեթոդների հիման վրա դիտարկումներով կազմակերպության կողմից իր արտադրական պրոցեսի վիճակի, այդ թվում՝ հումքի օգտագործման, դրա ընթացքում առաջացած վնասակար նյութերի որակի ու քանակի, օգտագործվող բնական ռեսուրսների որակի ու քանակի եւ բնապահպանական օրենսդրության պահանջներին շրջակա միջավայրի վիճակի համապատասխանության գնահատման գործընթաց:
Բնապահպանական կառավարման պլան.

- *Մեղմող միջոցառումներ*

1. Մոնիթորինգի ելակետային հետազոտություններ (օդի որակ, ջրի որակ, աղմուկ և

[illegible]ումներ)

1.1. Հանքավայրի և մերձակա բնակավայրերի օդի որակի հետազոտում

1.2. Տեղանքի մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսների բաղադրության հետազոտում

1.3. Տեղանքի ռադիացիոն ֆոնի հետազոտում

1.4. Տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի հետազոտություն

2. Մասնակապիտալ աշխատանքներ

2.1. Բուսական, կենդանական աշխարհի պաշտպանության և հողածածկի մաքրման աշխատանքներ

2.2. Բուսահողի կտրում, տեղափոխում և պահեստավորում

2.3. Մակաբացման ապարների տեղափոխում և պահեստավորում

2.4. Շրջանցիկ առուների վրա կամրջակների տեղադրում

2.5. Էրոզիայի ռիսկերին ենթակա տարածքներ ամրացում

2.6. Շինարարական նկատառումներով հնագիտական վայրերի հողի օգտագործման բացառում

2.7. Աշխատանքների ընթացքում հնագիտական գտածո կամ անհայտ իր հայտնաբերելու դեպքում, կապալառուն պետք է հետևի համապատասխան ընթացակարգին

3. Հողային աշխատանքներ՝ հանքաքարի ջարդում և մանրացում, արտաքին լցակույտի և լցակույտի շահագործում ապարների տեղափոխում, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործում

3.1. Ջրցան մեքենաների և մեխանիզմների օգտագործում

3.2. Շրջանցող առուների անխափան աշխատանքի վերահսկում

3.3. Միջոցներ ձեռնարկել, որ սարքավորումների բոլոր մասերն ունենան համապատասխան խլացուցիչներ

3.4. Հաստատել երթևեկության արագության սահմանափակումներ

3.5. Լուծույթների պատրաստումը իրականացնել օդափոխության համակարգերով համալրված տեղամասերում

- Մշտադիտարկման աշխատանքներ (նմուշարկում և լաբորատոր չափումներ)

4. Տարեկան

4.1. Օդի քիմիական կազմը

4.2. Ջրերի քիմիական կազմը

4.3. Հողերի հատկությունը և քիմիական կազմը

4.4. Ռադիացիոն ֆոնը

4.5. Բուսական և կենդանական տեսակները

5. Եռամսյակային

5.1. Լուծույթների արտահոսք

6. Ամսեկան

6.1. Շարժիչների աշխատանքը

6.2. Դիզելային վառելանյութերի, քսայուղերի, քիմիկատների կամ այլ թունավոր նյութերի արտահոսքը

7. Շաբաթական

7.1. Հանված բուսահողի որակը

7.2. Խախտված հողածածկ

7.3. Էրոզիայի երևույթներ

8. Օրական

8.1. Տեղանքի փոշոտվածություն

9. Միանվագ

9.1. Մեկուսիչ շերտերի որակ

Բնապահպանական կառավարման պլանի իրականացման համար նախատեսվում է տարեկան մոտ `40.0 մլն ՀՀ դրամ:
Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների կառավարման պլանը ենթակա է պարբերաբար վերանայման:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

(անունը, ազգանունը)

«___» __________ 2014թ.

Կ.Տ.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝

«ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ

(կազմակերպության անվանումը)

ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«___» __________ 2014թ.

Կ.Տ.

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

## ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԻՎ ՊՎ -245 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք.Երևան «23» 05 2016թ.

Հիմք ընդունելով՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական անվտանգության և ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունների դրական եզրակացությունների արժանացած, ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի, հանքաքարի վերամշակման ու ոսկու կորզման տեխնոլոգիական ռեգլամենտի, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փոփոխությունները, «ԳԵՈԹԻՄ» ՓԲ ընկերության, 2016 թ.-ի մարտի 17-ի թիվ Հ/Ա-2016/151 և մայիսի 2-ի թիվ Հ/Ա-2016/158 գրությունները, 2012թ.-ի սեպտեմբերի 26-ի՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագրի.

1. ~~2.1 կետի առաջին պարբերության՝ « 2 տարի շինարարական շրջան, 9 տարի~~ օգտակար հանածոների արդյունահանում, 7 տարի հանքի փակում» բառերը փոխարինել՝ «5 տարի՝ շինարարական շրջան (մինչև 2019 թ.-ի հուլիսի 1-ը), 9 տարի՝ օգտակար հանածոյի արդյունահանում, 5.5 տարի՝ հանքի փակում» բառերով.
2. – Հավելված թիվ 1 «Ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները»
   _ Հավելված թիվ 2 «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները»
   _ Հավելված թիվ 3 «Համայնքների սոցիալ- տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները »խմբագրել հետևյալ նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելված թիվ 1, հավելված թիվ 2 և հավելված թիվ 3-ի.
3. Սույն փոփոխությունները ուժի մեջ են մտնում կողմերի կողմից ստորագրելու պահից և համարվում են օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ -245 պայմանագրի անբաժանելի մասը.

| | |
|---|---|
| ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ | ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ <ԳԵՈԹԻՄ > ՓԲԸ |
| ԼԵՎՈՆ ՅՈՒԼՅԱՆ | Հ. Նիկոյան |
| -------------------------- | |
| 23.05.2016թ | 23.05.2016թ |

*Հավելված N 1*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*23.05.2016 թ. ՆՊԿ-245*
*ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխություն*

*Հավելված N 1*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*26.09.2014 թ. ՆՊԿ-245*
*ընդերքօգտագործման պայմանագրի*

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

## 1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները

| NN | Ծախսերի անվանումը | Կատարման, ներդրումների ժամկետը | Չափը - մլն ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Հանքի աշխատանքներ, այդ թվում՝<br>• Ճանապարհների կառուցում և մակաբացման աշխատանքներ<br>• դատարկ ապարների հարթակի կառուցում | մինչև 01.07.2019թ. | 11,768.01 |
| 2 | Կապիտալ, այդ թվում՝<br>• Կույտային տարալվացման հարթակի, ոսկու կորզման ֆաբրիկայի, ջարդիչ կայանքի, փոխակրիչի, ենթակառուցվածքների և ինժեներական հաղորդակցուղիների շինարարություն<br>• Սարքավորումներ և մեխանիզմներ<br>• Շենքերի,շինությունների կառուցում | մինչև 01.07.2019թթ | 96,211.8 |
| 3 | Գործառնական ծախսեր հանքի կառուցման ընթացքում | մինչև 01.07.2019թթ | 517.0 |
| | Ընդամենը կապիտալ ներդրումներ | | 108,496.81 |

Վերոնշյալ գումարները չեն ներառում գնային տատանումների և չնախատեսված ծախսերի հավելում, հետևաբար իրական ծախսերը կարող են տարբեր լինել:

2. Պետական տուրքի եւ ընդերքօգտագործման վճարներ

2.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են պարտադիր վճարներ (բնապահպանական, բնօգտագործման կամ ռոյալթի)՝ "Բնապահպանական եւ բնօգտագործման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով եւ չափով.

2.2 ընդերքօգտագործման թույլտվության դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում է տարեկան պետական տուրք՝ համաձայն "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով եւ չափով:

3. Բնության եւ շրջակա միջավայրի դրամագլուխ եւ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից համայնքների

բնակչության անվտանգության եւ առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ

3.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից բնության եւ շրջակա միջավայրի դրամագլխի վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով եւ վճարման կարգով.

3.2 օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության եւ առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով եւ վճարման կարգով.

3.3 բնապահպանական աշխատանքների իրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած հատկացումների չափը.

3.4 օգտակար հանածոների արդյունահանման նախագծով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից բնության եւ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ

23.05.2016թ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ
<ԳԵՈԹԻՄ> ՓԲԸ

23.05.2016թ

*Հավելված N 2*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*23.05.2016թ.* *թ. NՊՎ-245*
*ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխություն*

*Հավելված N 2*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*26.09.2014* *թ. NՊՎ-245*
*ընդերքօգտագործման պայմանագրի*

## ՀԱՆՔԻ ՓԱԿՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ՝

1.1 ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հանքի փակման ծրագրով նախատեսված՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումները (վերապատրաստման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ եւ հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար եւ այլն):

1.2 փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումները (համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր եւ միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն եւ այլն).

1.3 հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը եւ այն ներկայացնել լիազոր մարմին:

Միջոցառումների ցանկ ուղված հանքի փակումից հետո հնարավոր սոցիալ-տնտեսական խնդիրների մեղմացմանը

| NN | Միջոցառումների անվանումը | Կատարման ժամկետը | Ներդրումների չափը, մլն. ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Վերաորակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ եւ հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար եւ այլն<br>• Հանքի շահագործման ժամկետի ընթացքում շրջակա համայնքների մարդկային ռեսուրսների հմտությունների զարգացում | Տարեկան | 61.0 |
| 2 | Համայնքների սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր եւ միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն եւ այլն<br>• Գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկատիրության խրախուսումը/աջակցումը<br>• Բույսերի/ծառերի տնկարանի (ների) զարգացումը<br>• Գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորման և վերամշակման օբյեկտների հիմնումը<br>• Տարածքում կաթի մշակման ձեռնարկությունների կոոպերատիվների հիմնումը և հովիվներին աջակցություն կաթի արտադրության ծավալների մեծացման հարցում<br>• Սարավան և Գնդեվազ համայնքներում կոոպերատիվների ստեղծման աջակցության, մրգերի չորանոցների և իրացման աջակցություն | | |

2. Խախտված հողերի վերականգնման (ռեկուլտիվացիայի) նպատակով շրջակա միջավայրի պահպանության և արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության աշխատանքների ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման հաշվարկ:

| Հ/հ | Հիմնա-վորում | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափման միավորը | Ծավալը | Արժեքը մլն. դրամ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Միավորի | Ընդհանուր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | | Հանքատար և լցակույտատար ճանապարհների ռեկուլտիվացիա | կմ | 18.26 | 9.684 | 176.837 |
| 2 | | Արտաքին լցակույտի ռեկուլտիվացիա | հա | 140.69 | 4.842 | 681.249 |
| 3 | | Տարրալվացման հարթակ և ավազանների ռեկուլտիվացիա | հա | 135.75 | 4.842 | 657.329 |
| 4 | | ԱԴՎ կայան և վարչական շենքերի papamnտաժում և ռեկուլտիվացիա | հա | 19.35 | 4.842 | 93.697 |
| 5 | | Փոխակրիչների հանգույցի ապամոնտաժում և ռեկուլտիվացիա | հա | 16.87 | 4.842 | 81.688 |
| 6 | | Ավտոինքնաթափերի բեռնաթափման հանգույցի ռեկուլտիվացիա | հա | 5.11 | 4.842 | 24.744 |
| 7 | | Զարդիչ կայանների ապամոնտաշոժում և ռեկուլտիվացիա | հա | 18.93 | 4.842 | 91.663 |
| 8 | | Ջրահեռացման առուների ռեկուլտիվացիա | կմ | 4.7 | 9.684 | 45.517 |
| 9 | | Պայթուցիկ նյութերի պահեստի ապամոնտաժում և ռեկուլտիվացիա | հա | 1 | 4.842 | 4.842 |
| 10 | | Ջրամատակարարման կայանի ապամոնտաժում և ռեկուլտիվացիա | հա | 0.52 | 4.842 | 2.518 |
| 11 | | Արդյունաբերական հրապարակի ռեկուլտիվացիա | հա | 1 | 4.842 | 4.842 |
| | | Ընդամենը | | | | 1,864.926 |

Նախնական վճար՝ 279.738 մլն դրամ
Տարեկան վճար՝121.938 մլն դրամ

| NN | Մշտադիտարկում | Արժեքը մլն. ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | Ռեկուլտիվացման աշխատանքների մոնիտորինգ և պահպանում | 150.0 |
| 2 | Մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիտորինգ | 82.0 |
| 3 | Կանաչապատման/ռեվեգետացման մոնիտորինգ | 22.0 |
| | Ընդամենը | 254.0 |

Նախնական վճար՝ 38.1 մլն դրամ

Տարեկան վճար՝16.61 մլն դրամ

3. Խախտված հողերի վերականգնման (ռեկուլտիվացիայի) նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամգլխին և արտադրական լցակույտերի տեղադիրքի եւ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար տարեկան վճարումների չափերը.

| Վճարման ժամկետները | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նախնական վճար (15%) | | Դրամագլխին վճարվող տարեկան վճարներ[illegible]անքի փակում | | | | | | | | | | | | |
| Ժամկետ | 2014 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 |
| մլն. ՀՀ դրամ | 279.74 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 | 121.94 |
| 1 ամսվա ընթացքում պայմանագիրը կնքելու պահից | | 30-Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ | 30- Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ | 30- Դե[illegible] | 30-Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30-Դեկ | 30- Դեկ |
| Նախնական վճար-ներ – մշտադիտար-կումների համար (15%) | | Մշտադիտարկումների վճարվող տարե[illegible]վճարները | | | | | | | | | | | | |
| Ժամկետ | 2014 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 |
| մլն. ՀՀ դրամ | 38.1 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 | 16.61 |
| 1 ամսվա ընթացքում պայմանագիրը կնքելու պահից | | 30-Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ | 30-Դեկ | 30- Դեկ | 30-Դեկ | 30- Դեկ | 30- Դե[illegible] | 30-Դեկ | 30- Դեկ | 30- Դեկ | 30-Դեկ | 30- Դեկ |

| | |
|---|---|
| **ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ** | **ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ** |
| **ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ** | Հ. Աղայան |
| 23. 05. 2016թ. | 23. 05. 2016թ. |

Հավելված N 3
Օգտակար հանածոյի արդյունահանման
23.05.2016 թ. NՊԿ-245
Ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխություն
Հավելված N 3
Օգտակար հանածոյի արդյունահանման
26.02.2014 թ. NՊԿ-245
Ընդերքօգտագործման պայմանագրի

## Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ

### 1, Շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները

| NN | Պարտավորությունների անվանումը | Կատարման ժամկետը | Ներդրումների չափը, մլն. ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքային ենթակառույցների զարգացում՝ <br>• Դպրոցների <br>• Մանկապարտեզների <br>• Ճանապարհների <br>պայմանների բարելավում, անձնակազմի վերապատրաստում և այլն | Տարեկան | 19.0 |
| 2 | Գյուղատնտեսության զարգացում՝ <br>• Անասնապահություն – նպաստելու անասունների գենետիկայի բարելավմանը և կաթնարտադրության բարձրացմանը <br>Այգեգործություն – հիմնելու շահույթ ստեղծող և տնտեսական աճին նպաստող մոդելներ՝ լավագույն պրակտիկաների և եղած բնական և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով: | | 25.0 |
| 3 | Կրթություն՝ <br>• երեխաների, պատանիների և բնակչության այլ խավերի շրջանում սպորտի, արվեստի զարգացում <br>• իրազեկություն շրջակա միջավայրի վերաբերյալ և այլն | | 17.5 |
| 4 | Առողջապահություն՝ <br>• համայնքներում առողջապահական ծառայությունների բարելավում <br>• բնակչության իրազեկություն բարձրացում, սարքավորումների ձեռք բերում | | |
| | Ընդամենը | | 61.5 |

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ

23.05.2016թ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ
<ԳԵՈԹԻՄ> ՓԲԸ

23.05.2016թ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
# ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ ՊՎ-245 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «18» 08 2016թ.

Հիմք ընդունելով՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016թ. 18 օգոստոսի N 83 -Ա հրամանը, <ԳԵՈԹԻՄ> ՓԲԸ -ի՝ ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագրում՝ <ԳԵՈԹԻՄ> ՓԲԸ> բառերը փոխարինել՝ <ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ> ՓԲԸ> բառերով:

Սույն փոփոխությունը համարվում է՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագրի անբաժանելի մասը:

| | |
|---|---|
| ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝ | ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝ |
| | <ԳԵՈԹԻՄ> ՓԲԸ<br>(կազմակերպության անվանումը) |
| ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ<br>(անունը, ազգանունը) | (անունը, ազգանունը) |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| «18» 08 2016թ.<br>Կ.Տ. | «18» 08 2016թ.<br>Կ.Տ. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«02» 07 2019թ. N 209-Ա

# ՀՐԱՄԱՆ

## «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը, ինչպես նաև հաշվի առնելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մայիսի 16-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ-31-Ն օրենքի 14-րդ հոդվածը.

### *ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ*

1. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի 2012թ. սեպտեմբերի 26-ին վերաձևակերպված ընդերքօգտագործման իրավունքում (թույլտվություն ՇԱԹՎ-29/245, ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագիր, լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2012թ. սեպտեմբերի 26-ի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-29/245 պայմանագրի (այսուհետ պայմանագիր) մեջ՝

ա. 2.1 կետի առաջին պարբերության՝ «5 տարի՝ շինարարական շրջան (մինչև 2019 թ.-ի հուլիսի 1-ը), 9 տարի՝ օգտակար հանածոյի արդյունահանում, 5.5 տարի՝ հանքի փակում» բառերը փոխարինել «շինարարական շրջան՝ մինչև 2020 թ.-ի դեկտեմբերի 31-ը, 9 տարի՝ օգտակար հանածոյի արդյունահանում, 5.5 տարի՝ հանքի փակում» բառերով,

բ. պայմանագրի Հավելված թիվ 1-ի (Ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները) 1-ին կետի աղյուսակի 1-ին, 2-րդ, և 3-րդ տողերում «մինչև 01.07.2019թ.» բառերը փոխարինել «մինչև 31.12.2020թ.» բառերով:

2. Ընդերքի գործակալության պետին՝ ապահովել.

1) «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում (թույլտվություն ՇԱԹՎ-29/245, ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագիր, լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտ) համապատասխան փոփոխությունների կատարումը.

2) համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝
ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց՝ եռօրյա ժամկետում:

4.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանին:

7/8/2019

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Signed by: TERTERYAN VACHE 1201620635

/Ս. Պապիկյան

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
# ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ ՊՎ-245 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ք. Երևան «08» հուլիսի 2019թ.

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ ի դեմս նախարար ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԻ, որը գործում է ՀՀ անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ՝ լիազոր մարմին) մի կողմից, և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ տնտեսավարող սուբյեկտը (այսուհետ՝ ընդերքօգտագործող), ի դեմս գործադիր տնօրեն ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆԻ, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) և այլ իրավական ակտերով, համապատասխանաբար նախարարության և տնտեսավարող սուբյեկտի կանոնադրություններով և հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթղթերը, տրամադրվող հանքավայրի կամ հանքավայրի տրամադրվող տեղամասի կամ հանքային ջրի աղբյուրի կամ հորատանցքի և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտի շահագործման նախագիծը, կնքեցին սույն համաձայնագիրը՝ 2012թ սեպտեմբերի 26-ի թիվ ՊՎ 245 ընդերքօգտագործման պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին:

Ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագրի՝ «2. Պայմանագրի առարկան» բաժնի

1. 2.1 կետի առաջին պարբերության՝ «5 տարի՝ շինարարական շրջան (մինչև 2019 թ.-ի հուլիսի 1-ը), 9 տարի՝ օգտակար հանածոյի արդյունահանում, 5.5 տարի՝ հանքի փակում» բառերը փոխարինել «շինարարական շրջան՝ մինչև 2020 թ.-ի դեկտեմբերի 31-ը, 9 տարի՝ օգտակար հանածոյի արդյունահանում, 5.5 տարի՝ հանքի փակում» բառերով,

**2.** Պայմանագրի Հավելված թիվ 1-ի (Ֆինանսական առաջարկները եվ ընդերքօգտագործման վճարները) 1-ին կետի աղյուսակի 1-ին, 2-րդ և 3-րդ տողերում «մինչև 01.07.2019թ.» բառերը փոխարինել «մինչև 31.12.2020թ.» բառերով:

3. Սույն փոփոխությունը համարվում է՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-245 պայմանագրի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

/ ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

(անունը, ազգանունը)

7/9/2019

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Signed by: TERTERYAN VACHE 1201620635

(ստորագրությունը)

08 հուլիսի 2019թ.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

ՀԱՅԿ ԱԼՈՅԱՆ

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

08 հուլիսի 2019թ.

*Հավելված N 1*
*օգտակար հանածոյի արդյունահանման*
*08 նոյեմբ. ՆՊՎ-245*
*Ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխություն*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները

| NN | Ծախսերի անվանումը | Կատարման, ներդրումների ժամկետը | Չափը - մլն ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Հանքի աշխատանքներ, այդ թվում՝<br>• Ճանապարհների կառուցում և մակաբացման աշխատանքներ<br>• Դատարկ ապարների հարթակի կառուցում | մինչև 31.12.2020թ | 11,768.01 |
| 2 | Կապիտալ, այդթվում՝<br>• Կույտային տարալվացման հարթակի, ոսկու կորզման ֆաբրիկայի, ջարդիչ կայանքի, փոխակրիչի, ենթակառուցվածքների և ինժեներական հաղորդակցուղիների շինարարություն<br>• Սարքավորումներ և մեխանիզմներ<br>• Շենքերի, շինությունների կառուցում | մինչև 31.12.2020թ | 96,211.8 |
| 3 | Գործառնական ծախսեր հանքի կառուցման ընթացքում | մինչև 31.12.2020թ | 517.0 |
| | Ընդամենը կապիտալ ներդրումներ | | 108,496.81 |

Վերոնշյալ գումարները չեն ներառում գնային տատանումների և չնախատեսված ծախսերի հավելում, հետևաբար իրական ծախսերը կարող են տարբեր լինել:

2. Պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարներ

2.1 Ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են պարտադիր վճարներ (բնապահպանական, բնօգտագործման կամ ռոյալթի)՝ "Բնապահպանական և բնօգտագործման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով.

2.2 Ընդերքօգտագործման թույլտվության դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում է տարեկան պետական

տուրք՝ համաձայն "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

3. Բնության և շրջակա միջավայրի դրամագլուխ և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ

3.1 Ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից բնության և շրջակա միջավայրի դրամագլխի վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով.

3.2 Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով.

3.3 Բնապահպանական աշխատանքների իրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած հատկացումների չափը.

3.4 Օգտակար հանածոների արդյունահանման նախագծով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին: